Ուժը միասնության մեջ է

Գագիկ Մելքոնյան. *փոխգնդապետ. հատուկ մոտոհրացգային գնդի հրամանատար: Ծնվել է 1956 թ. Էջմիածնի շրջանի Հայկաշեն գյուղում: Ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը. ամուսնացած է, ունի երեք երեխա:*

– Նրանց մասին գրելը հեշտ չէ: Նրանք չեն սիրում խոսել իրենց մասին, չեն սիրում հարցազրույց տալ: «Իսկ ինչու՞ իմ, գրեք ուրիշի մասին»: Հետո յնակերպում են ավելի հստակ. «կամ գրեք բոլորիս մասին, կամ ընդհանրապես մի գրեք»: Իրոք, նրանց հասկանալը դյուրին չէ: Անմիջապես հիշում են զոհված ընկերներին, պատմում նրանց հերոսություններից, առաքինություններից, իսկ ցրանք քիչ չեն: Չէ, դժվար է շուրջ հինգ տարի պատերազմի մեջ գտնվող մարդկանց հետ խոսել պատերազմի մասին և առանձնացնել նրանցից մեկին: Նրանք այդ չեն ընդունում, որովհետև պարզապես նրանք միշտ միասին են. հաղթանակների և պարտությունների ականապատված ճանապարհներին: Նրանցից մեկն էլ Գ. Մելքոնյանն է, նա, որ 1988 թ. փետրվարից ընդգրկվելով շարժման մեջ, նույն տարվա աշնանը Էջմիածնի կամավորական ջոկատի կազմում մեկնում է Հադրութ և մասնակցում շրջանի գյուղերի պաշտպանությանը: Այդտեղ իր ընկերները Գագիկ Մելքոնյանին ընտրում են նոր կազմավորվող ջոկատի հրամանատար: Այնուհետև,1990 թ. սկզբներին, նա ընկերների հետ ընդգրկվում է երկրապահ ջոկատների կազմում և մասնակցում Հայաստանի և Արցախի մի շարք շրջանների ինքնապաշտպանությանը: Նույն թվականի սեպտեմբերին, երբ ներքին գործերի նախարարության կազմում ստեղծվեց Հատուկ գունդը, Գ. Մելքոնյանը նշանակվեց առաջին գումարտակի երկրորդ վաշտի հրամանատար: Վաշտը ինքնապաշտպանական կռիվների է մասնակցում Սիսիանի ու Կապանի շրջաններում, Կոռնիձորում, Շահումյանի շրջանում Կարաչինար, Բուզլուխ, Հայ Պարիս... ո՞րը թվես, ո՞րը հիշես: Որսորդական հրացաններով հաղթանակները զրահատեխնիկայով գրոհող թուրքերի դեմ, թե ռուսական զինուժի պարտադրած գաղթն ու նահանջը:

– Հանգուցյալ Ջիվան Աբրահամյանի հետ ընկած ողջ հանրապետությունով զրահատեխնիկայի շարժիչներ ու սարքավորումներ էինք փնտրում: Մեծ դժվարությամբ հավաքեցինք երեք հատ: Այ, Ջիվանի մասին գրեք, զոհվեց Սիսիանում, գրեք Նիկոլայ Հայրապետյանի, Վարդան Տերտերյանի, Վարազդատ Ավագյանի, ապարանցիներ Մայիսի, Գեղեռնի, Նահապետի (Ֆեդյա) մասին: Շահումյանի նահանջից հետո Գ. Մելքոնյանը գնդի թիկունքի պետն էր: Այս գնդի ինչպես բոլոր մարտիկները, այնպես էլ նա, հիացմունքով է խոսում հրամանատար Վլադիմիր Կարապետյանի մասին: Ընդհանրապես Հատուկ գնդի տղաները, որոնք այսօր սպայական կազմի կորիզն են կազմում, շատ բան են սովորել Վ. Կարապետյանից և Ռ. Մարդանյանից:

– Գիտեք ինչո՞վ էր ուժեղ մեր Հատուկ գունդը, – հարցով ինչ է դիմում հրամանատարը և պատասխանում իր հարցին, – կարգապահությամբ: Այնտեղ բոլորը հասուն մարդիկ էին, կռվում էին անչնազոհ, կազմակերպում գնդի տնտեսությունը, իսկ թիկունքում աստիճանաբար նորակոչիկներով բանակն էր համալրվում և յեվավորվում:

Այսօր փոխգնդանպետ Գ. Մելքոնյանը զորամասի հրամանատար է, զորամաս, որը ռազմական կարևոր խնդիրներ է իրականացնում Հայաստանի հարավային սահմաններում: Նա հպարտությամբ է նշում, որ իրենց սպայական անչնակազմից 220-ը իր մարտական ընկերներն են՝ կոփված բազմաթիվ ճակատամարտերում և նրանք ուս-ուսի տված կազմում են մեկ միասնություն: Նրանցից են հրամանատարի տեղակալ Ս. Եղիազարյանը, թիկունքի պետ Հ. Հովհաննիսյանը, գումարտակի հրամանատարներ Ա. Մարտիրոսյանը և Վ. Արսենյանը, Վ. Քալոյանը, Ֆ. Ավագյանը և ուրիշներ. բոլորին չես կարող հիշատակել լրագրային մեկ հոդվածում:

– Գագիկը շատ հոգատար է զինվորների նկատմամբ և շատ հեռատես. խուճապի չի մատնվում, – նրա մասին ասում է շտաբի պետ Ա. Գալստյանը:

– Նա ունի մարդկային շատ կարևոր հատկանիշներ, – ընկերոջը լրացնում է Սամվել Եղիազարյանը: – Կարողանում է մարդկանց համախմբել, իսկ զինվորական որոշումներ ընդունելիս անպայման հաշվի է առնում բոլոր հրամանատարների կարծիքները:

Հրամանատարը ցավով է հիշում այս տարվա ապրիլի 3-ի ճակատամարտը: Քելբաջարում ԼՂՀ մարտիկներից կրելով պարտություն, հակառակորդը մեծ ուժերով հակահարձակման էր անցել հարավում և ցգտրում էր փակել ԼՂՀ-ն Հայաստանին կապող ուղին: Դաժան ճակատամարտից հետո թշնամին այդպես էլ ոչնչի չկարողացավ հասնել: Տղաները դիմադրեցին հերոսաբար. ցավոք եղան նաև կորուստներ:

Զոհվեցին իր ընկերները, իր զինվորները և հրամանատարի համար դա չափազանց ծանր էր: